26 փետրվարի 2009 թվականի N 194 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 1285-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 6-ի «Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության նախագահության ընթացքում՝ 2008 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2009 թվականի ապրիլի 30-ը անցկացվելիք միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1285-Ն որոշման հավելվածի ցանկի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

NN ը/կ	Միջոցառումը	Կատարող կազմակերպությունը	Ժամկետը	Վայրը	Ֆինանսավորման աղբյուրը
9.	Գիտաժողով՝ «Վերարտադրողական առողջության բարելավման ժամանակակից մոտեցումները» խորագրով, և գիտաժողովին զուգահեռ՝ վերարտադրողական առողջության ոլորտում օգտագործվող ժամանակակից դեղերի ցուցահանդես	ՀՀ առողջապահության նախարարություն	2009 թ. մարտի 18-19	Երևան	ՀՀ պետական բյուջե

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. Ե ր և ա ն

09_0194